



ԳԵՐԱՇՆՈՐՅ Տ. ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՖԱՅԱՆԻ ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԵՍՆԱՄՅԱԿԸ



յս տարի, փետրվար ամսում,
Պետերսոնի Ս. Ղևոնդյանց եկե-
ղեցու հոգարարձության նախա-
ճենությամբ, արժանավայել շքով
և հանդիսությամբ նշվեց գերաշնորհ Տ.
Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանի քա-
հանայության և ազգային-կրթական գործու-
նեության երեսնամյակը:

Հորելար սրբազնը, իբրև Հայաստան-
յայց Առաքելական Ծկեղեցու անձնվեր ու
խղճամիտ պաշտոնյա, որպես հովիվ ու ա-
ռաջնորդ, բանին կենաց քարոզիւ, պատվով
ու նախանձախնդիր ոգով, սրբազն նվի-
րումով ծառայել է իր Ծկեղեցուն, իր հոտին
ու Հայրենիքին, միշտ բարձր կանգնած լի-
նելով իր հոգևորականի վեհ կոչման ու
պարտականության գիրքերում։ Եվ երբեք
պատհականություն չեր սիրո ու հարգանքի
այն հրապարակային մեծարանքը, որով շըր-
շպատվեց ու զնահատվեց ըստ արժան-
վույն հորելար սրբազնը։

Մամբրե սրբազնը արդարև բացառիկ
ու պատվավոր դիրք է գրավում մեր բարձր
հոգնորականության շարքերում, իր լայն
զարգացումով, լեզվական բարձր կովտությունով,
մանավանդ իր Հայրենասիրությամբ և
իր Քշմիածնասիրությամբ։ Նորին սրբազ-
նությունը սարկավագության օրերից մինչև
պատասխանատու դիրքերը եղել է գիտակից,
կարգապահ, Հայաստանյայց Ծկեղեցու կարդ
ու կանոնին նախանձախնդիր, բարի ու ազ-
նըլվական հոգևորական, որի համար բացի
իր Մայրենի Ծկեղեցու և իր ժողովրդի շա-
հերից, չեն եղել ուրիշ մտահոգություններ
և փառասիրություններ։ Ավելի քան երեսուն
տարիների վրա տարածվող նրա ազգային-
եկեղեցական գործունեությունը առանձնա-
պես ուսանելի է և նշանակալից նրանով
մանավանդ, որ այդ գործունեությունը ա-

ուաշնորդվել է Ազգին, Եկեղեցու, Հայրենի-
քին նվիրվելու անխարդախ ու աննահանջ
սիրով, լուամիտ ու պայծառ հայրենասի-
րությամբ, գիտակից ու բեղմնավոր ծառա-
լությամբ։

Հորելար սրբազնը ծնվել է 1893 թվա-
կանի փետրվարին, Զմյուռնիա քաղաքում,
ազգային-եկեղեցական ավանդություններով,
տոհմային շնչով հարուստ ու բարեպաշտ
ընտանիքում։

Մանուկ Արամի դաստիարակության գոր-
ծում պատվավոր ու վճռական դեր է կատա-
րել նրա բարեպաշտ մայրը, որն իր որ-
դու երիտասարդ սրտում արթնացրել է
Ազգին ու Եկեղեցուն ծառայելու ազնիվ
գուցմունքը։

Սրբազնը իր նախնական կրթությունը
ստացել է իր ծննդավայրի ազգային թեմա-
կան դպրոցներում, իսկ միջնակարգ կրթու-
թյունը՝ Մխիթարյանների գիշերօթիկ վար-
ժարանում։

Սրբազնը, որպես բազմակողմանիորեն
պատրաստված մի խոստումնալից երիտա-
սարդ, ոտք գ զնում կանքի սեմին։

1908 թվականին Մամբրե սրբազնը անց-
նում է Եգիպտոս ու Պորտ-Սահիդում միա-
նում իր հարազատներին, ապա անցնում
Լիբանան՝ իր ուսումը շարունակելու համար։

1920 թվականին, զինված գիտության մեծ
պաշարով ու եռանդով, ովհատում է իր երի-
տասարդական ուժերը նվիրել Հայաստան-
յայց Առաքելական Եկեղեցուն, ի մեծ ու-
րախություն իր ծնողներին, և մտնելով Երու-
սաղեմի Սրբոց Հակոբյանց վանքը, կուսա-
կոն քահանա է ձեռնադրվում 1923 թվակա-
նին հոգելույս Եղիշե Պատրիարք Դուռյանից՝
օծակից ունենալով Կյուրեղ Պատրիարքին։
Այսուհետև երիտասարդ ու խոստումնալից
հոգևորականի առաջ բացվում է պատվա-

վոր, բայց դժվարին ու շնորհընկալ ասպա-
րեզ:

Այդ օրվանից նա անխոնջ ու անդուզ աշ-
խատում է մեծ արդյունավետությամբ: Սիր-
վում է բոլորից ու անսպառ եռանդուզ ծա-

վիվն է հանդիսացել, խոսել է, խրատել,
միսիթարել, կազմակերպել է իր թեմը, ընդ-
լայնել է դպրոցական ցանցը, զարկ է տվել
ազգային-եկեղեցական կյանքին, քաջա-
լերել ու ղեկավարել է գաղութի ողջ ազգա-



Հորելլար գերաշնորհ Տ. Մամրե արքեպիսկոպոս Գալֆայան

ուայում է հոգևորականի բարձր գիտակցու-
թյամբ և վեհ կոչումով:

Ո՞ւր էլ որ գնացել է իրը հոգևոր հոգիվ,
առաջնորդ, նա իր ժողովրդի իսկական հո-

լին-մշակութային կյանքը, զարկ է տվել
մանավանդ մայրենի լեզվի ուսուցման ու
դասավանդման, ազգային ոգու դրացման
ու պահպանման, ու աշխատել է միշտ իր

Հայրենազգութիւն, բայց հայրենասեր ու համա-
տացյալ ժողովրդի սրտերը չերմացնել Հա-
յաստանյայց Առաքելական Ծեղություն դա-
րավոր ու պատմական կենտրոն Ս. Եջմիա-
ծնի սիրով ու մեր պանծալի Հայրենիքի գա-
ղափարով:

Ահա այդպիսի շնորհընկալ հովվական պաշտոնավարություն է ոմեցել սրբազնը Յափալում, Մարտելում, Հյուախսային Ամերիկայի մի շարք քաղաքներում։ Սրբազնը դափնիների վրա հանգստացող չի եղել։ Նրա անսպառ եռանդը մղել է նրան միշտ աշխատանքի, գործունեության։ Եվ նա իր ողջ եռանդն ու գործունեությունը ի սպաս է զրել իր ժողովրդի ազգային-կրթական կարիքներին։

Առանձնապես հիշատակովթյան արժանի
է Հոքելյար սրբազնի Ամերիկայի թեմի տե-
ղապահովթյան պաշտոնավարովթյունը 1933—
1939 տարիներին, հոգելուս Տ. Ղևոնդ արք-
եպիսկոպոս Դույցանի նահատակովթյունից:
Նա ծեռնհասորեն վարում է այդ դժվար
օրերի տեղապահությունը, ի հայտ բերելով
հոգու կայտնություն, սկզբունքայնովթյուն,
նախաձեռնովթյուն, տոկունովթյուն, քաղաքա-
ցիական արիովթյուն, իբր հոգեորական և
հայրենասեր:

1935 թվականին, *S. Խորեն Ա. Կաթողիկոս*, գնահատելով Մամբրե վարդապետի Հայութնանվիր ու եկեղեցաշեն գործունեությունը, եպիսկոպոս է ձեռնադրում նրան, արժանացնելով նաև Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի պատվանշանին:

Հայրապետական այդ բարձր գնահատությունը սրբազնը արդարացնում է հաջորդ

տարիների մեջմավոր ու ազգօսուած դոր-
ծունելովամբ։ Նա ձեռնհասորին է վա-
րում իր խնամքին հանձնված թեմերի գոր-
ծերը, իրեն հատուկ կանոնավորությամբ,
հետևողականությամբ, արդյունավետու-
թյամբ, երիտասարդի խանդավառությամբ։

Սըրբազնի երեսնամյա քահանայության
առթիվ գրված հարգանքի ու սիրո այս մի
քանի տողերի մեջ կարելի չէ ամբողջական
պատկերը տալ նրա հանրօգուտ գործու-
նեության:

Ահա՝ մի անձնդիր օրինակելի հովիվ, որ
իր սեփական աշբերով տեսնում է իր քըրտ-
նաշան աշխատանքի բարի պտուղները:

«Գքոյս ի քոյց քեզ մատուցանեմք»:

Հորեցար սրբազնը գտնվում է իր ուժերի ծաղկման շրջանում։ Ազգն ու Եկեղեցին նրանից դեռ շատ շնորհընկալ ծառայություններ են սպասում ի փառ Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու և ի պայծառություն հայ ժողովրդի։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, իրեն պաշտոնական օրդան Ամենայն Հայոց Հայրապետության, իր հարգանքի և սիրո տուրքը միացնում է սրբազնի երեսնամյա հորելիանի առթիվ արտահայտված հանրային հրապարակային մեծարանքին, մաղթելով սիրելի հորելիար սրբազնին քաջառողջություն, երկար ու բեղդնավոր տարիներ՝ ծառայելու նույն ոգով ու թափով Հայաստանաց Առաքելական Եկեղեցուն և հայ համատագլաւ ժողովրդին:

«ԷԶՄԻԱՇԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

